



Թիվ 108

1 փետրվարի, 2011 թ.

ՄԵԾԱՐԳՈ  
ՏԻԱՐ ԶՈՐԻ ԲԱԼԱՅԱՆ

ՄԵԾԱՐԳՈ ԱՆԴԱՄՆԵՐ  
«ԱՐՄԵՆԻԱ» ԱՌԱԳԱՍՏԱՆԱԿԻ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ

Սիրելի հավատավոր զավակներ մեր Սուրբ Եկեղեցու,  
Գոհունակությամբ տեղեկացանք, որ «Մեսրոպ Մաշտոց» արշավախմբի  
մասնակիցներդ, բարեհաջող շարունակելով շուրջերկրյա նավարկությունը,  
չրջանցել եք Հորն հրվանդանը, որտեղ հայկական խաչ եք տեղադրել՝ ի հիշատակ  
երկիր մոլորակի բոլոր անմեղ զոհերի:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնությունն ենք հղում  
արշավախմբի անդամներիդ: Մենք՝ որպես ցեղասպանություն վերապրած  
ժողովուրդ, առանձնակի հարգանքով բոլոր անմեղ զոհերի հիշատակի առջև, միշտ  
հանդես ենք գալիս բռնությունների և մարդկության դեմ գործված  
ոճրագործությունների դատապարտման պահանջով: Եվ Հորն հրվանդանում ձեր  
կողմից տեղադրված հայկական խաչը նույնպես վկայություն է հայ ժողովրդի  
խաղաղասիրության և հանուն արդար ու բարօր աշխարհի ջանքեր ներդնելու  
անխախտ վճռականության:

Աղոթում ենք առ Ամենակալն Աստված և հայցում, որ հանապազ օրհնությամբ  
զորացնի ձեր քաջեռանդությունն ու կորովը՝ բարեհաջող ավարտելու  
ճամփորդությունը, նորանոր ձեռքբերումներով արդյունազարդելու ձեր կյանքի  
ընթացքը, պահպանելով ձեզ ամենքիդ Իր Սուրբ Աջի ամենախնամ հովանու ներքո:

Օրհնությամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ